

**МЕТОДОЛОГИЯ ОПРЕДЕЛЕНИЯ ПЕРСПЕКТИВНЫХ ХАРАКТЕРИСТИК ВОДНЫХ РЕСУРСОВ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ НА ТЕРРИТОРИИ УПРАВЛЕНИЯ БАСЕЙНАМИ РЕК  
(НА ПРИМЕРЕ ОЗЕРА СЕВАН И ЕГО БАСЕЙНА)**

**Б. П. МНАЦАКАНЯН  
Л. А. ЧИЛИНГАРЯН**

Статья может стать перспективной, целостной и характеризующей методологической основой бассейнов рек для водных ресурсов РА, а также указателем для будущих исследований и для расчетов, учитывающих влияние естественных, антропогенных климатических факторов поверхностного стока. Результаты подобных исследований и расчетов в свою очередь могут стать основой для использования, управления и долгосрочного планирования водными ресурсами республики.

**THE METHODOLOGY OF DEFINITION OF PERSPECTIVE DESCRIPTION OF WATER RECOUSES IN THE RA IN THE AREAS OF RIVER BASIN CONTROL  
/BY EXAMPLE OF THE LAKE SEVAN AND ITS BASIN/**

**P. MNACAKANYAN  
L. A. CHILINGARYAN**

The article can serve as a descriptive methodological basis for river basins and perspective complete basis for water recourses of the RA. It can also be a guide for future research and calculations, where the impact of natural, anthropogenic and climate factors of surface flow are taken into account. The results of such research and calculations can serve as a basis for the use, control and long-term planning of water recourses of the RA.

**ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԷԹՆՈԳԵՆԵԶԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ  
ԼԵՆԱՇԽԱՐՀԻ ԷԹՆՈԷԿՈԼՈԳԻԱՆ**

**Ռ. Խ. ԳԱԳԻՆՅԱՆ**

*Աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր*

Էթնոսները համակարգային կապերով և վարքի ստերեոտիպերով միմյանցից տարբերվող մարդկային օրգանիզմների դիսկրետ փակ համակարգեր են: Էթնիկական ամբողջությունը դիմամիկ համակարգ է, որն իր մեջ ընդգրկում է ոչ միայն մարդկանց, այլև նրանց պատկանող լանդշաֆտի տարրերը, մշակույթի ավանդույթները և հարևանների հետ ունեցած փոխադարձ կապերը [1]: Էթնոլոգիայում Գումիլյովը էթնոսը դիտում է որպես կենսոլորտային երևույթ, որն էթնոգենեզի էներգետիկ գործընթացի արդյունքն է: Էթնոգենեզում շարժման աղբյուր է հանդիսանում Վ. Ի. Վերնանդսկու կողմից նկարագրված կենսոլորտի կենդանի նյութի էներգիան [2]: Էթնոսը տիեզերքից ստանալով էներգիայի եզակի լիցք և այն աստիճանաբար ծախսելով, անցնում է բնական միջավայրի հետ հավասար

րակշռված վիճակի (գոմեոստազի), կամ էլ տրոհվում է առանձին մասերի և անհետանում: Էթնոսի նկատմամբ էներգիայի այդպիսի էֆեկտը Գոմիոլոգը անվանում է պասիոնարություն: Այն առանձին անհատների (պասիոնարների) ունակությունն է արտաքին միջավայրից կլանելու էներգիայի ավելի մեծ քանակություն, քան անհրաժեշտ է բնական միջավայրի հետ օրգանիզմի էթնոլանդշաֆտային հավասարակշռությունը պահպանելու նպատակով: Կլանման նկատմամբ ունակությունը որոշվում է ժառանգաբար փոխանցվող հատկանիշներով: Ըստ Գոմիոլոգի՝ գենոֆոնդում երևացող հատկանիշների աղբյուրը մուտացիան (փոխակերպություն) է՝ պասիոնատային ցնցումը:

Էթնոսների ձևավորման գործընթացը կատարվում է ոչ թե միատեսակ լանդշաֆտներում, այլ տարբեր լանդշաֆտային ռեգիոնների սահմանակից շրջաններում և էթնիկական շփման գոտիներում, որտեղ անխուսափելի է ինտենսիվ մետիսացիան: Նոր էթնոսը ծագում է ոչ թե հին էթնոսի տրոհումից, այլ երկու կամ ավելի էթնոսների սինթեզից: Էթնիկական համակարգի պասիոնարային լարվածության հետևանքով տարբեր դարաշրջաններում և երկրագնդի տարբեր մասերում առաջանում են միջօրեականներին կամ զուգահեռականներին մոտ ուղղությամբ ձգված պասիոնարային ցնցման զոնաներ, որտեղ տեղի են ունենում էթնոգենեզի գործընթացներ, որոնք ընթանում են մի շարք փուլերով՝ վերելքի, ակմատիկ, բեկումնային, իներցիոն, անկումային, վերականգնման, ռեիկտային [1]:

Եթե արտաքին ազդակները (թշնամի ցեղերի ներխուժում, եղեռն, համաճարակ և այլն) այդ գործընթացի վրա չեն ազդում, որը կարող է տեղի ունենալ ցանկացած փուլում, ապա էթնոգենեզի ողջ գործընթացը տևում է 1200-1500 տարի, որից հետո էթնոսները կամ անհետանում են, կամ անցնում գոմեոստազի վիճակին: Փուլերի հարաբերական տևողությունը տարբեր է: Վերելքի փուլը տևում է 300 տարի, որտեղ առանձնացվում են ինկուբացիոն (գաղտնի) և ակնհայտ ենթափուլեր: Գաղտնի ժամանակաշրջանը տևում է մոտ 150 տարի և չի արձանագրվում ժամանակակիցների կողմից: Ակմատիկ փուլի տևողությունը մոյնպես 300 տարի է: Այս փուլում է ձևավորվում էթնոսի համալիրային յուրահատկությունը և ավարտվում նվաճողական քաղաքականությունը: Բեկումնային փուլը տևում է մոտ 200 տարի: Իրենց տևողությամբ խիստ տատանվում են իներցիայի և անկումային փուլերը, որոնք կախված են ինչպես էթնոսի քայքայման ներքին պրոցեսների ինտենսիվությունից, այնպես էլ պատմական ճակատագրից, որը որոշվում է նախորդ փուլերում կուտակված նյութական բազիսի զարգացման աստիճանով, արեալի ֆիզիկաաշխարհագրական պայմաններով և սահմանակից էթնոսներով: Գոմեոստազի փուլը, որում գոյատևում են պատմական ռեիկտները, ամբողջությամբ կախված է տրոհված էթնոսի մնացորդները պարփակող տարածքի ֆիզիկաաշխարհագրական առանձնահատկություններից: Եթե այդ պայմանները նպաստավոր են, ապա այն դառնում է իզոլյատ և գոյատևում դարեր:

Վերը շարադրված տեսության հիման վրա մեր կողմից փորձ է արվել վերլուծել հայկական էթնոգենեզի գործընթացը պատմական ժամանակաշրջանում և տարբեր փուլերի ընթացքում նրա ազդեցությունը էկոհամակարգերի վրա: Հայկական լեռնաշխարհը լեռնային երկիր է: Լեռնային շրջանները հարմար են ռեիկտային էթնոսների պահպանման համար: Լեռնաշղթաների, գետահովիտների

խիտ ցանցը նպաստավոր պայմաններ է ստեղծում իզոլյատների գոյատևման համար: Նոր էթնոսները ծագում են ոչ թե լեռնային մարզերի կենտրոնական շրջաններում, այլ նրանց ծայրամասերում: Հայկական լեռնաշխարհի եզրամասերում և հարակից ռեգիոններում՝ տարբեր լանդշաֆտային գոտիների շփման շրջաններում հաճախ են ձևավորվել նոր էթնոսներ: Պասիփոնարային ցնցումների հետևանքով մ.թ.ա. 4-3-րդ հազարամյակներից սկսած ծագեցին նախահնդեվրոպական բազմաթիվ էթնոսներ, որոնց մեծ մասը գաղթեց տարբեր ուղղություններով, իսկ մի մասն էլ մնաց նախահայրենիքում և փոքր տեղաշարժեր կատարեց շրջակայքում: Այդ մասին են վկայում Գամկրելիձեի և Իվանովի կատարած ուսումնասիրությունները [3]: Հայկական լեռնաշխարհի տարածքում և շրջակայքում ապրում էին բազմաթիվ ցեղեր՝ խեթեր, խուռիներ, լուվիացիներ, մուշկեր, կասկեր, ուրարտացիներ և այլն: Հայկական լեզուներով խոսող ցեղերը կենտրոնացված էին լեռնաշխարհի արևմուտքում՝ Եփրատի վերին ու միջին հոսանքների և Տիգրիսի վերին հոսանքի ավազաններում [4-8]:

Ինչպես բոլոր հին էթնոսների, այնպես էլ հայկական էթնոսի ձևավորման գործընթացը աղոտ է լուսաբանված առկա աղբյուրներում: Հայկական էթնոսի ձևավորումը անցել է 2 շրջան՝ հնագույն և հին: Ակնհայտ է, որ մինչ այդ նույնպես եղել են առայժմ մեզ անհայտ էթնոգենեզներ: Հնագույն էթնոգենեզի մասին տեղեկություններ են պահպանվել մ.թ.ա. 15-12-րդ դարերի խեթական արձանագրություններում: Ըստ Գ. Ղափանցյանի, այն կապվում է լեռնաշխարհի հյուսիս-արևմուտքում գտնվող Հայասա-Ազի ցեղային միության հետ [6]: Այդ մասին են վկայում նաև Գ. Ջահուկյանի վերջին ուսումնասիրությունների արդյունքները, որոնք հաստատում են Հայասա-Ազի պետության մեջ հայկական էթնոսի դոմինանդ՝ որոշիչ դերը [8]: Մ.թ.ա. 12-րդ դարից հետո Հայասա-Ազին չի հիշատակվում: Պետք է ենթադրել, որ այն կործանվել է խեթական կայսրության հետ միաժամանակ: Ըստ Գ. Ջահուկյանի, Հայասայում և նրա միջակայքում գտնվող հայկական ցեղերը տեղաշարժվել են հարավ և արևելք, ընդհուպ մինչև Ուրմիա լճի հարավը:

Առաջին անգամ հայկական պետությունը «Արմենիա» անվամբ հիշատակված է Դարեհ առաջինի Բեհիստունյան եռալեզու արձանագրության մեջ՝ մ.թ.ա. 520թ., իսկ առաջին հայ թագավորը՝ Տիգրանը՝ մ.թ.ա. 550թ., Քսենոփոնի «Կյուրոսի դաստիարակությունը» աշխատության մեջ: Էթնոգենեզի սկզբնական պահը փոքր քանակի անհատների յուրատեսակ մուտացիան է (պասիփոնարային ցնցումը), որն էապես փոխում է մարդկանց վարքի ստերեոտիպը: Մուտացիայի պահը պատմական պրոցեսի ընթացքում անմիջապես չի ընկալվում և միայն երկարատև 150 տարվա ժամանակահատվածում է ակնհայտ դառնում, թե երբ սկսվեց այդ գործընթացը: Այդ պատճառով էլ միայն 150 տարի անց, վերելքի փուլի ակնհայտ ժամանակաշրջանում է այն արձանագրվում գրավոր աղբյուրներում: Այդ նկատառումները հաշվի առնելով՝ հայկական էթնոսի կազմավորման երկրորդ շրջանի սկիզբը կարելի է համարել մ.թ.ա. 8-րդ դարը: Ինչ վերաբերում է էթնոսի ծագման շրջանին, ապա մենք համամիտ ենք այն հեղինակներին [4, 9], որոնք գտնում են, որ այն կազմավորվել է Ուրարտուի և Ասորեստանի միջև ընկած Արմե-Շուպրիայի ցեղային միության տարածքում՝ Մշո դաշտում (Տարոն), Արևմտյան Տիգրիսի վերին և Արածանիի ստորին հոսանքների ավազաններում (Աղծնիք): Արմե-Շուպրիան ընկած է լեռնաանտառային և չոր տափաստանային

լանդշաֆտային գոտիների շփման շրջանում: Այստեղ ապրում էին տարասեռ ցեղեր՝ խուռիներ, հայեր, ուրումեացիներ և այլն, որոնք էլ հանդիսացան հայկական էթնոսի ձևավորման ենթաէթնոսային տարրերը: Արմե-Շուպրիայում աստիճանաբար գերակշռող դիրք են զբաղեցնում հայկական ցեղերը, որոնց լեզուն էլ դառնում է միջցեղային հաղորդակցության միջոց: Այս ցեղերի սինթեզից էլ ձևավորվեց հայկական էթնոսը: Արմե-Շուպրիայում ձևավորվող նոր էթնոսի մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ այստեղ էին ապաստանում Ուրարտուից և Ասորեստանից փախած պասիոնարային անհատները [4,10]: Ըստ Աստվածաշնչի և Մ. Խորենացու, 681թ. Ասորեստանի թագավոր Սինարխսերիբի որդիներ Ադրամելիքը և Սարասարը սպանելով հորը, նույնպես ապաստան են գտել այստեղ [11,12]:

Հայկական էթնոսի կազմավորման գաղտնի ժամանակաշրջանի մասին տեղեկություններ են պահպանվել հնագույն առասպելներում և ավանդույթներում: Ըստ Մովսես Խորենացու պահպանած առասպելի՝ հայկական էթնոսը ձևավորվել է աստվածաշնչյան Նոյի որդիներ Սեմի և Հաբեթի սերունդներից [12]: Պատահական չէ, որ առասպելում հիշատակված են 2 տարբեր աղբյուրներ, որոնցից առաջինը Սեմը և նրա որդի Տարբանն է, երկրորդը կապված է Հայկի անվան հետ, որի ծննդաբանությունը թորգոմի, թիրասի և Գամերի միջոցով հասնում է մինչև Հաբեթ: Առասպելը անուղղակի վկայում է, որ հայկական էթնոսը կազմավորվել է տարբեր ցեղերի սինթեզից:

Այսպիսով, Արմե-Շուպրիայի տարածքում մ.թ.ա. 8-րդ դարում ընթանում է հայկական էթնոսի ձևավորման գաղտնի ժամանակաշրջանը: Մեկ-երկու սերնդի ընթացքում երևան են գալիս պասիոնարային անհատներ, պատմական ասպարեզում հայտնվում է մարդկանց խումբ, որն արագ զարգանում և ձևավորում է իր էթնիկական դեմքը, ինքնագիտակցությունը և հակադրվելով մյուսներին՝ իր կամքն է թելադրում նրանց: Մոտ 150 տարի անց հայկական էթնոսը դուրս է գալիս պատմական ասպարեզ և հիշատակվում գիր ունեցող հարևանների կողմից: Էթնոսոցիոլոգիական համակարգի ձևավորումը վկայում է վերելքի փուլի գաղտնի ժամանակաշրջանի ավարտի մասին: Վերելքի ակնհայտ ժամանակաշրջանում հայկական էթնոսը տարածվեց դեպի արևելք և զբաղեցրեց Ուրարտուի ողջ տարածքը: Մ.թ.ա. 6-րդ դարի առաջին տասնամյակներում Ուրարտուն վերանում է և նրա փլատակների վրա ձևավորվում է Հայկական պետությունը:

Մ.թ.ա. 8-րդ դարում տեղի ունեցած պասիոնարային ցնցման հետևանքով ձևավորվեցին նաև հելլենական, հռոմեական և պարսկական էթնոսները, որոնք զգալի ազդեցություն ունեցան հայկական էթնոսի զարգացման վրա: Կյուրոս Մեծի կողմից ստեղծված Աքեմենյան Պարսկաստանը նվաճելով Հայաստանը՝ 200 տարով դանդաղեցրեց էթնոգենեզի գործընթացը: Սակայն Ալեքսանդր Մակեդոնացու կողմից Պարսկաստանի կործանումից հետո 330թ. վերականգնվում է հայկական պետությունը և այդ թվականից էլ սկսվում է հայկական էթնոգենեզի ակնատիկ փուլը: Այս փուլում իր գագաթնակետին է հասնում էթնոսի նվաճողական քաղաքականությունը, որն էլ առավելագույնին հասավ Արտաշեսյան հարստության ժամանակ: Տիգրան Մեծի օրոք Հայաստանը առնվազն կրկնակի անգամ զերազանցում էր իր էթնոաշխարհագրական սահմանները: Չնայած հայերը հռոմեացիների հետ միասին ձևավորվել էին նույն պասիոնարային ցնցումից,

սակայն զարգացմամբ ետ էին մնացել: Այդ պատճառով էլ հայ-հռոմեական պատերազմների ընթացքում նրանք պարտություն կրեցին և 70թ. ստիպված եղան հրաժարվել նվաճողական քաղաքականությունից և պետության սահմանները հիմնականում համընկան էթնիկական սահմաններին: Ակմատիկ փուլը տևում է մինչև մեր թվարկության սկիզբը: Այդ ժամանակ արևելքում սկսվում է պարսկական էթնոգենեզի երկրորդ շրջանը: Քանի որ Պարթևական Պարսկաստանը գտնվում էր վերելքի փուլում, իսկ Չայաստանը անցնում էր բեկումնային փուլ, պարթևները նույնպես հայերից ավելի զորեղ էին: Հռոմը և Պարսկաստանը ձգտում էին իրենց ազդեցության ոլորտում պահել Չայաստանը, որտեղ և ստեղծվում էին հռոմեասեր և պարթևասեր կուսակցություններ: Դրանց, ինչպես նաև արտաքին թշնամիների միջև ընթացող պայքարի հետևանքով զոհվում էին պասիոնարային անհատները և էթնոսում նվազում էր պասիոնարների քանակը: Բեկումնային փուլը տևում է մինչև 226թ.: Իներցիոն փուլը սկսվում է 3-րդ դարի կեսերից և շարունակվում մինչև 5-րդ դարի կեսերը: Այս փուլում տեղի է ունենում էթնիկական համակարգի պասիոնարության հետագա նվազում և նյութական ու կուլտուրական արժեքների ինտենսիվ կուտակում: Կրած ցնցումներից հետո մարդիկ ցանկանում են հանգիստ ապրել: Նրանք հասկանում են, որ այն անհատները, որոնք ցանկանում են ցուցաբերել իրենց ինքնատիպությունը, հարևանների համար ներկայացնում են անենամեծ վտանգը: Դրանից խուսափելու համար անհրաժեշտ է փոխել հասարակական իմպերատիվը, այսինքն ստեղծել համընդհանուր իդեալ, որին ձգտեն ընդօրինակել բոլորը: Այդպիսին դարձավ Գրիգոր Լուսավորիչը: Իներցիոն փուլում պասիոնարները մեծ մասամբ զբաղվում էին գիտությամբ, արվեստով: Այս փուլում երևան են գալիս հանճարները՝ գիտնականները, պոետները, պատմագիրները: Այդ ժամանակ Չայաստանը ընդունում է քրիստոնեությունը, ստեղծում է ազգային գիրը, պատմագրությունը, զարգանում է գիտությունը, արվեստը:

Էթնոգենեզի վերջին փուլը անկումայինն է, որի ժամանակ էթնոսը անցնում է զոմեոստագի վիճակի: Չայաստանում այն սկսվում է 428թ., երբ երկիրը բաժանվում է Բյուզանդիայի և Սասանյան Պարսկաստանի միջև: Արտաքին թշնամիների դեմ պայքարի և ներքին երկպառակությունների հետևանքով զգալիորեն կրճատվեց բնակչության թիվը և պասիոնարների քանակը:

Սակայն որոշ էթնոսների մոտ անկումային փուլով էթնոգենեզը չի ավարտվում: Երբ առաջատար ենթաէթնոսը սպառում է իր հնարավորությունները և անկում ապրում, ապա ծայրամասային ենթաէթնոսներից մեկը ընդունում է էստաֆետը և էթնոգենեզի գործընթացը շարունակվում է՝ տեղի է ունենում ռեգեներացիա, այսինքն՝ էթնիկական կառուցվածքի մասնակի վերականգնում: Այդպիսի գործընթաց տեղի ունեցավ 855թ. Չայաստանում: Լեռնաշխարհի հյուսիսում, որտեղ պահպանվել էին պասիոնարային անհատները, Բագրատունիների գլխավորությամբ կարողացան վերականգնել Չայկական պետությունը, որը գոյատևեց 190 տարի: Վերականգնման երկրորդ շրջանը տեղի ունեցավ 11-րդ դարում՝ Լեռնաշխարհի սահմաններից դուրս՝ Կիլիկիայում, որտեղ Չայաստանից տեղափոխված պասիոնարային անհատները հիմնեցին թագավորություն: Այն գոյատևեց ավելի երկար ժամանակ՝ 300 տարի:

Բագրատունիների անկումից հետո Չայաստանում շարունակվեց էթնոգենե-

զի անկումային փուլը: Բնակչության թիվը զգալիորեն նվազեց, նրանք անկարող էին դիմագրավել Հայաստան ներխուժած քոչվոր ցեղերին: Գոմեսոտազի վիճակում հայկական էթնոսը գոյատևեց մինչև 20-րդ դարը: Մ.թ.ա. 8-րդ դարում ձևավորված էթնոսներից միայն հայերն են, որ պահպանվել են մինչև մեր օրերը: Հայկական էթնոսի պահպանմանը նպաստել են մի շարք գործոններ: Առաջինը թերևս լեռնային ռելիեֆն է, որտեղ բնակչության համար կան բազմաթիվ էկոլոգիական խորշեր: Անգամ, ապրելով մահմեդական էթնոսի պայմաններում, հայերը կարողացան պահպանել կայուն էթնիկական ամբողջություն՝ ամրագրված էնդոգամիայով: Մահմեդական և հայկական էթնոսները հիմնականում զբաղեցնում էին տարբեր լանդշաֆտային տարածաշրջաններ: Երկրորդ կարևոր գործոնը քրիստոնեության ընդունումն էր, որի շնորհիվ էթնոսը զերծ մնաց մահմեդական էթնոսի մեջ ձուլվելուց:

Ոչ միայն անհատները, այլև էթնոսները ունեն իրենց հայրենիքը: Էթնոսի հայրենիքը համարվում է լանդշաֆտների այն զուգակցումը, որտեղ նա առաջին անգամ ձևավորվել է որպես նոր համակարգ: Էթնոսների գերակշռող մասը բնակվում է որոշակի էկոհամակարգերում: Որոշ էթնոսներ տարբեր պատճառներով տեղափոխվում են այլ տարածքներ, որտեղ բնակվելու համար ընտրում են այնպիսի լանդշաֆտներ, որոնք նման են իրենց նախկին բնակեցման շրջաններին: Այսպես, քոչվոր սելջուկները նվաճելով Հայաստանը, զբաղեցրին միայն չոր տափաստանները, կամ հայերը զանգվածաբար արտագաղթելով Կիլիկիա, բնակվեցին նրա լեռնային շրջաններում, որոնք հիշեցնում էին իրենց հայրենիքի լանդշաֆտները:

Տարբեր էթնոսներ բնությանը վերաբերվում են տարբեր կերպ, սակայն նույն էթնոսը իր էթնոգենեզի տարբեր փուլերում տնտեսությունը վարում է տարբեր միջոցներով և էկոհամակարգի վրա ազդում տարբեր ձևերով: Էթնոգենեզի տարբեր փուլերում փոխվում է հասարակության վերաբերմունքը մարդու հանդեպ և մարդկային կոլեկտիվի վերաբերմունքը բնության նկատմամբ:

Ցանկացած էթնոսի համար աշխարհագրական միջավայրը առաջին հերթին հանդիսանում է գոյատևման միջոցների աղբյուր: Լանդշաֆտը զգալի չափով որոշում է էթնոսի գործունեությունը: Գտնվելով էթնոսի հետ միասնության մեջ, այն ազդում է նրա վրա, միաժամանակ ինքն էլ կրում օրըստօրե աճող տեխնածին ուղղակի ներգործությունը և փոխվելով նորովի է ներգործում լանդշաֆտի վրա: Էթնոսը և լանդշաֆտը փոփոխվում են փոխադարձաբար, ստեղծելով հակադարձ կապերով միասնական համակարգ:

Էթնոսն իր ծագման ժամանակ «հղկում» է պարփակող լանդշաֆտն իր պահանջներին՝ համապատասխան և միևնույն ժամանակ ինքն էլ հարմարվում լանդշաֆտային պայմաններին, որի ժամանակ էկոհամակարգը տուժում է նվազագույն չափով: Էթնոսը վերելքի փուլում էկոհամակարգի վրա համարյա չի ազդում, քանի որ պասիվնարները զբաղված են պատերազմներով: Նրանք ժամանակ չունեն զբաղվելու բնությամբ: Վերելքի փուլում հայկական էթնոսը պահպանեց Ուրարտուից ժառանգված լանդշաֆտը՝ բարձր զարգացած ոռոգովի հողագործությամբ և այն հարմարեցրեց իր պահանջներին: Ակմատիկ փուլում, երբ էթնոսը ընդարձակում է իր տարածքները, Հայկական լեռնաշխարհի սահմաններից դուրս բնությունը տուժում էր երկակի: Իր հայրենիքում էկոհամակար-

գի վրա ճնշումը թուլանում է, որի հետևանքով լանդշաֆտները վերականգնվում են: Պասիոնարների կողմից նվաճված երկրները խիստ տուժում են: Սակայն նվաճողները ինչպիսի դաժանություն էլ ցուցաբերեն, բնությանը սահմանափակ չափով են վնասում և արշավանքներից հետո մնում են վերականգնվող էկոհամակարգեր: Բեկումնային փուլում պասիոնարների քանակի նվազման հետևանքով փոխվում է էքոսի վերաբերմունքը շրջակա միջավայրի նկատմամբ: Արդեն ոչ ոք համարձակություն չի դրսևորում և սկսվում է «արշավը» սեփական էկոհամակարգերի վրա: Որքան ուժեղ է էքոսը ազդում բնության վրա, ձգտելով այն ենթարկել իր կամքին, այնքան ուժեղանում է էկոհամակարգի հակազդեցությունը: Բնական հարստությունների գիշատչաբար շահագործման հետևանքով տեղի են ունենում անշրջելի գործընթացներ, էկոհամակարգը չի հասցնում ինքնավերականգնվել և հաղթանակը դառնում է պարտությունից վտանգավոր: Այն իր առավելագույնին է հասնում իներցիայի փուլում: Հենց այդ փուլերում էլ տեղի ունեցան լանդշաֆտների զգալի փոփոխություններ, որոնցից շատերը հանգեցրին բացասական հետևանքների: Այն հատկապես ազդեց առավել ակտիվ յուրացվող գոգավորությունների (Արարատյան, Վանի և այլն) լանդշաֆտների վրա: Ոռոգվող հողերում սկսվեց հողերի երկրորդային աղակալման գործընթացը: Ակտիվ անտառահատման հետևանքով կրճատվեցին անտառային տարածքները և ակտիվացավ հողերի էռոզիան լեռնաշղթաների լանջերին: Արդյունքում այդ ամենը հանգեցրեց էկոհամակարգերի վատթարացմանը:

Էքոզենոզի վերջին փուլում հայկական էքոսը հարմարվեց աղքատացած լանդշաֆտներին և բնության հանդեպ նրա վերաբերմունքը դարձավ սպառողական և պահպանողական:

Հայկական լեռնաշխարհում առավել տարածում ունեն տափաստանային և մարգագետնային լանդշաֆտները, որոնք իրենց արիդայնությամբ ունեն զգալի տարբերություններ: Այսպես, տափաստանային լանդշաֆտներում տարածված են սեմիարիդ և թույլ արիդ, իսկ մարգագետնայինում՝ թույլ արիդ, սեմիարիդ և մասնակիորեն հումիդ պայմանները:

Հայկական լեռնաշխարհի նշված բնական առանձնահատկությունները զգալի չափով կանխորոշել են նրա տարածքում էթնիկական գոյացությունների տարատեսակ ձևավորումները և դրսևորումները: 11-12-րդ դարերում քոչվոր սելջուկները նվաճելով Հայաստանը, առաջին հերթին զբաղեցրեցին իրենց հայրենիքի լանդշաֆտները հիշեցնող չոր տափաստանները: Տեղական բնակչության հիմնական մասը տեղափոխվեց ավելի բարձր լանդշաֆտային գոտիներ: Էքոսի մի մասը գաղթեց հարևան երկրներ:

Արդյունքում լեռնաշխարհի չոր տափաստաններում վերափոխվեց բնօգտագործման տիպը. ոռոգովի հողագործությունը փոխվեց հեռագնա անասնապահության: Ավերվեցին ոռոգիչ կառույցները: Բազմիցս կրկնվող պատերազմների հետևանքով հողերի զգալի մասը չէր մշակվում և բնությունը «հանգստանում էր»: Լեռնաշխարհի բնակչությունը աստիճանաբար կրճատվեց: Եթե 12-րդ դարում Հայկական լեռնաշխարհի բնակչությունը կազմում էր 6-7 մլն մարդ, ապա 15-րդ դարում այն կրճատվեց մինչև 3-4 մլն: 16-18-րդ դարերում Հայկական լեռնաշխարհի կենտրոնական մասը դարձավ Թուրքիայի և Իրանի ռազմական հակամարտությունների ասպարեզ: Արդյունքում երկու հակամարտող կողմերի

միջև ձևավորվեց ավերված բնակավայրերով և չմշակվող հողերով սակավաբնակ տարածք: Սկսվեց երկարատև էկոլոգիական պատերազմ, որը բնության օգտին էր, քանի որ չմշակվող հողերն աստիճանաբար վերականգնվում էին:

Բոլոր էթնոսների ճակատագիրը աստիճանաբար անցումն է էթնոլանդշաֆտային հավասարակշռությանը, որի ժամանակ էթնիկական կոլեկտիվը բնակվելով որևէ էկոհամակարգում աստիճանաբար հարմարվում է դրան և նվազեցնում բնակչության թիվը: Էկոհամակարգերի փոփոխությունները ոչ թե նրա վրա ժողովուրդների մշտական ներգործության արդյունքն են, այլ էթնոսների երկարատև զարգացման պատմության մեջ կարճատև իրավիճակների հետևանքներ:

Հայկական լեռնաշխարհի ժամանակակից լանդշաֆտները կրում են ոչ միայն մոտիկ անցյալի ու ներկայի ներգործությունների ուղղակի կամ անուղղակի տեխնիկական ազդեցության կնիքը, այլև այն իներցիոն ալիքը, որ առավել վաղ ժամանակներից թողել է մարդը: Ներկայումս Հայաստանը ժառանգություն է ստացել փոփոխված, զգալիորեն աղքատացած լանդշաֆտներ, որոնց գումարվելով ժամանակակից փոփոխությունները՝ ավելի են վատթարացնում էկոհամակարգերը: Բնության նկատմամբ կատարված հանցագործություններից շատերը, որոնք վերագրվում են ժամանակակից տեխնիկական քաղաքակրթությանը, ունեն անցյալի իրենց խոր արմատները: Յուրաքանչյուր էթնոս իր սերունդներին թողնում է ոչ միայն իր կատարած աշխատանքի արգասավոր պտուղները, այլև աղքատացած շրջակա միջավայր, վատթարացված՝ հյուծված լանդշաֆտներ:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Гумилев Л. Н.* Этногенез и биосфера Земли. Л., 1989.
2. *Вернадский В. И.* Химическое строение биосферы земли и ее окружение. М., 1965.
3. *Гамкрелидзе Т. В., Иванов В. В.* Индоевропейский язык и индоевропейцы. Т. 1-2, Тбилиси, 1984.
4. Հայ ժողովրդի պատմություն: Զ. 1, Երևան, 1971:
5. *Дяконов И. М.* Предистория Армянского народа. Ереван, 1968.
6. *Капанцян Гр.* Хайаса - колыбель армян. Этногенез армян и их начальная история. Ереван, 1947.
7. *Пяотовский Б. Б.* О происхождении Армянского народа. Ереван, 1946.
8. *Ջահուկյան Գ. Բ.* Արդյո՞ք հայերն ապրել են Առաջավոր Ասիայում մ.թ.ա. 12-րդ դարից առաջ: Լեզու և լեզվաբանություն, 2003, N1:
9. *Առաքելյան Ի. Ն., Ջահուկյան Գ. Բ., Սարգսյան Գ. Խ.* Ուրարտու-Հայաստան: Երևան, 1988:
10. *Саркисян Д. Н.* Страна Шуврия. Ереван, 1989.
11. Աստվածաշունչ: Թեհրան, 1989:
12. *Սուլեյս Խորենացի*, Հայոց պատմություն: Երևան, 1984:
13. *Իշխանյան Ռ.* Հայ ժողովրդի ծագման ու հնագույն պատմության հարցեր: Երևան, 1969:

**Р. Х. ГАГИНЯН**

Связка "человек-природа" представляет важнейшее условие возникновения этноса и его функционирования. Влияние этноса на ландшафт менялся не только в пространстве, но и во времени. Согласно пассонарной теории этногенеза Л.Н.Гумилева, этносы проходят ряд стадий - от молодости до глубокого старения и смерти или существуют в состоянии равновесия с биоценозом своего ландшафта, в гомеостазе. На разных стадиях этнос по-разному влияет на вмещающий его ландшафт. Давление на природу осуществляется не эволюционно, а дискретно и переходит от равновесия к неравновесию и обратно. Возникающий ландшафт ведет себя иначе, чем прежний. За последние пять тысяч лет антропогенные изменения ландшафтов с разной интенсивностью и в пределах определенных территорий происходили многократно.

**ETHNOGENESIS OF THE ARMENIAN PEOPLE AND ETHNOECOLOGY OF THE ARMENIAN HIGHLAND**

**R. KH. GAGINYAN**

A relation of "man – nature" is the most important condition of origin of ethnos and its functioning. The influence of ethnos on the landscape has changed not only in space but also in time. According to the passionate theory of ethnogenesis by L.N.Gumilyev ethnic groups go through a number of stages – from youth to the deep aging and death, or they exist in a balance state with biocenosis of their landscape, in homeostasis. At different stages ethnos has different effects on the landscape enclosing it. The pressure on nature isn't evolutionary, but discrete and moves from balance to disbalance and back. The ensuing landscape is different from the old one. For the last five thousand years the anthropogenic landscape changes with different intensity and within designated areas have occurred repeatedly.

**ԷԿՈՏՈՒՐԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐՈՂ  
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ**

**Լ. Ա. ՄԿՐՏՅԱՆ**

*Գավառի պետական համալսարանի Աշխարհագրության ամբիոնի լաբորանտ*

«Էկոտուրիզմ» տերմինը արևմուտքում պաշտոնապես օգտագործվել է մեքսիկացի էկոլոգ Հեկտոր Սեբալոս-Լասկուրայնի (իսպ. Hector Ceballos-Lascurain) գիտաժողովներից մեկի ժամանակ՝ 20-րդ դարի 80-ականների կեսերին:

Գոյություն ունեն էկոտուրիզմի տարբեր սահմանումներ: Ահավասիկ.

«Էկոլոգիական տուրիզմ կամ էկոտուրիզմ» դա ճանապարհորդություն է բնական միջավայրի հանդեպ մեծ պատասխանատվությամբ՝ չխախտելով բնությունը և տեսարժան վայրերը՝ ուսումնասիրության կամ վայելելու նպատակով: Այն բնական միջավայրի վրա «փափուկ» ազդեցություն է ունենում, ապահովում է տեղաբնիկների սոցիալ-տնտեսական ակտիվ մասնակցություն և այդ գործունե-